«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մարտի 5-ի ՀՕ-309 օրենքը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը կարգավորում է քաղաքացիական պաշտպանության կազմակերպման և իրականացման սկզբունքները, խնդիրները, միջոցառումները, ղեկավարումը, ուժերը, պաշտպանական կառույցները, նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսավորումը, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների, տարածքային կառավարման մարմինների, համայնքների ղեկավարների իրավասությունները, կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) պարտականությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և օտարերկրյա քաղաքացիների (այսուհետ՝ քաղաքացիներ) իրավունքներն ու պարտականությունները քաղաքացիական պաշտպանության բնագավառում:

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի հիմնական հասկացությունները

1.Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- **քաղաքացիական պաշտպանություն՝** ռազմական գործողությունների վտանգներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների պաշտպանության նպատակով խաղաղ ժամանակ և ռազմական դրության պայմաններում իրականացվող համալիր միջոցառումներ.
- **քաղաքացիական պաշտպանության կառավարման համակարգ՝** խաղաղ ժամանակ՝ պետական կառավարման համակարգի մարմիններում, համայնքներում և կազմակերպություններում ստեղծված, ռազմական դրության պայմաններում բնակչության պաշտպանության խնդիրների արդյունավետ լուծման համար նախատեսված կառավարման մարմինների, կառավարման կետերի, կապի և ազդարարման համակարգերի, կառավարման ավտոմատացված համակարգերի և միջոցների, ինչպես նաև այլ հատուկ համակարգերի փոխկապակցված ամբողջականություն.
- **քաղաքացիական պաշտպանության շտաբ՝** քաղաքացիական պաշտպանության կառավարման մարմին, որը ստեղծված է պետական կառավարման համակարգի մարմիններում, համայնքներում ու կազմակերպություններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման և անցկացման, ինչպես նաև անմիջական կառավարումը կազմակերպելու համար.
- **քաղաքացիական պաշտպանության ծառայություններ՝** պետական կառավարման համակարգի մարմիններում, համայնքներում և կազմակերպություններում իրենց իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու համար ստեղծված ծառայություններ.
- **քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝** համայնքներում, կազմակերպություններում ստեղծված կ